# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեծ հանդիսավորությամբ նշվեց Հիսուս Քրիստոսի հրաշափառ Սուրբ Հարության տոնը:

Տերունական տոնի առիթով Միածնաէջ Մայր Տաճարում պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Զանգերի ավետաբեր ղողանջների ներքո խաչվառներով զարդարյալ եկեղեցականաց թափորը Վեհարանից դեպի Սուրբ Տաճար առաջնորդեց Վեհափառ Հայրապետին եւ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանին:

Հայրապետական ամպհովանակիրներն էին ՀԲԸՄ Վարչության անդամներ Արիս Ադամյանը եւ Վազգեն Յակուբյանը, «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի նախագահ Լեւոն Սարգսյանը եւ ԱԺ պատգամավոր Արա Բաբլոյանը: Սուրբ եւ Անմահ Պատարագի ընթացքին Նորին Սրբության առընթերականներն էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը եւ Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

Պատարագի սրբազան արարողության ընթացքին Նորին Սրբությունը Հայրապետական իր պատգամը հղեց Փրկչի Հարության տոնի առիթով համայն հայ ժողովրդին՝ ամենքին փոխանցելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» կենդանարար ավետիսը:

Ս. Հարության ավետիսով Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքները հղեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին եւ ողջ հոգեւոր դասին: Ապա իր ողջույնը բերեց Ս. Պատարագին ներկա ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանին եւ պետական ավագանուն՝ հայցելով Բարձրյալի օրհնությունն իրենց կյանքին եւ ջանքերին՝ հանուն հայրենի մեր երկրի եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի բարօրության:

Սուրբ Պատարագի արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը եւ ՀԲԸՄ Վարչության անդամներ, ԱԺ պատգամավորներ, ՀՀ կառավարության անդամներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, բարերար հայորդիներ, գիտության, կրթության եւ մշակույթի գործիչներ:

Հավարտ Սուրբ Պատարագի Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրավիրյալներին վերստին բերեց Հայրապետական իր օրհնությունն ու բարեմաղթանքները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Սուրբ Հարության Պատարագ Մայր Տաճարում